

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի № 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ
ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՈՐՈՇՈՒՄ

_____ 2018 թվականի № _____ -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ

ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի

№ 1717-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին
համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ռ ի ղ
2 ու մ է.

1. 2018 թվականի աշխարհի ու Եվրոպայի առաջնություններում և
պատանեկան օլիմպիական խաղերում առավել բարձր ցուցանիշների
հասած մարզիկներին, մարզիչներին և բժիշկներին դրամական
մրցանակներ շնորհելու նպատակով Հայաստանի Հանրապետության
սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությանը 2018
թվականին հատկացնել 150 770 000 (հարյուր հիսուն միլիոն յոթ
հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ՝ Հայաստանի
Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված
Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային
ֆոնդի հաշվին (բյուջետային ծախսերի տնտեսագիտական
դասակարգման «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ
բյուջեից» հոդվածով):
2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի
դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի

պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին»
№ 1717-Ն որոշման № 11 հավելվածի № 11.22 և № 12 աղյուսակներում
կատարել լրացումներ՝ համաձայն № 1 և № 2 հավելվածների:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը
հաջորդող օրը: